Վերապատրաստման դասընթաց «Վարքագծի մասնագիտական էթիկա (դեոնթոլոգիա), փաստաբան-վստահորդ հարաբերություններ» թեմայով

11.09.2026 17:24

Հարգելի՛ փաստաբաններ,

14.09.2026թ. ժամը 10:00-13:00-ին ՀՀ փաստաբանների պալատը կազմակերպելու է վերապատրաստման դասընթաց **«Փաստաբանի վարքագծի մասնագիտական էթիկա (դեոնթոլոգիա): Փաստաբան-վստահորդ հարաբերություններ»** թեմայով:

Միաժամանակ հայտնում ենք, որ ՀՀ մարզերում և ՀՀ-ից դուրս <u>բնակվող</u> փաստաբանները, հրավիրված դասընթացին կարող են մասնակցել նաև հեռավար եղանակով, որի մասին գրանցման վերաբերյալ Ձեր նամակում ***պարտադիր անհրաժեշտ է նշել՝ Ձեր անունը, ազգանունը, արտոնագրի համարը, դասընթացի թեման և մասնակցության ձևաչափը***:

Ուշադրություն. Հաշվի առնելով հեռավար եղանակով դասընթացներին մասնակցել ցանկացողների թվաքանակը և Google meet հավելվածի միջոցով դասընթացի կազմակերպման ժանրաբեռնվածությունը, հեռավար եղանակով դասընթացին կարող են մասնակցել առաջին 100 գրանցվողները:

- Դասընթացը կվարի ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամ, փաստաբան Մարինե Ֆարմանյանը,
- **Դասընթացին մասնակցելու համար անհրաժեշտ է գրանցվել՝ մինչև 12.09.2026թ. ժամը 18:00-ն՝ պատասխան նամակ ուղարկելով training.coordinator@advocates.am էլեկտրոնային փոստի հասցեին, որտեղ անհրաժեշտ է նշել տվյալ դասընթացի թեման, Ձեր անուն, ազգանունը,արտոնագրի համարը, բնակության հասցեն:**
- **12.09.2026թ. ժամը 18:00-ից հետո և առանց դասընթացի թեմայի, անվան, ազգանվան, արտոնագրի համարի, ձևաչափի նշման, հեռավար մասնակցության գրանցումները չեն հաշվարկվելու,**
- Դասընթացին մասնակցությունը կհաշվարկվի պարտադիր վերապատրաստման 4 (չորս) ակադեմիական ժամ:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })